

5453

the Shump

891.99

12-35

4 Panthe  
1909

9011

Յ. Ա. ՓԻՈՐ

ԱՇԽԱՐՀԻԿ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Բ.

ՈՐԲԱՆ ՏԵԽԵԼՈՒ Է



ՇՈԳ-ՄՈԳ



12003

Կ. ՊՈԼԻՍ

Տպագրություն Գ. ՊԱՌԱՍԼԵԱՆ

Պողոսի-Հովհաննեսկուի 14

291.99

Ա-35

1909

42389-6.2

391.99  
Ա-35

Վահագուն  
պատուի

# ՈՐՓԱՆ ՏԵԽԵԼՈՒ Է

Յաւերժական, անհունապէս տևող ոչինչ կայ աշխարհ  
էիս վրայ: Տակն ալ առանկ է կարծեմ:

Ինչ որ սկիզբ մը ունի, պէտք է որ վախճան մըն ալ  
ունենայ: Բացառութիւնը կը կազմեն այս օրէնքին՝ իմ  
երրեմն գրած յօդուածներս որոնք ոչ մին ունին և ոչ միւսը:

Սկիզբին և վախճանին մէջ գտնուած միջոցին «տեսութիւն» կ'ըսեն, ինչ որ ինձմէ ազէկ գիտէք անշուշտ:

Կեանքը՝ այդ ամենէն թանկագին, ամենէն կարեւոք  
բանը, ան ալ իր տեսողութեան սահմանը ունի, որմէ ան-  
դին անցնիլ աեսնուած բան չէ:

Ամենէն քաջառողջ, ամենէն աներես և ամենէն հաս-  
տառամիտ մարդը չատ շատ հարիւր տարի կրնայ ապրիլ:

Մաթուսաղէմը օրինակ մի բերէք ինձի: Եթէ այդ ե-  
րանելին չափը անցուց և երկարակեցութեան recordը  
տուաւ մեզի, պատճառը ան է որ՝ նախ Աւետարեւ չէր  
չարդար, ան ատենները օրօմօպիլ չի կար, ամէն առառ-  
սափուած չէր մեզի պէս քարի կաբծրութեամբ ֆօլա ե-  
ղած օձիք մը կոճկելու և յետոյ նուրհանի շիրին «Սեւ ո-  
ձերմակները կարդալու հարկին մէջ չէր գտնուէք:

Տեսողութիւնը չափուած, կարուած, որոշ սահման մը  
ունի զատ զատ ամէն բանի համար և քանի մը անմշան

26147-618

բացառութիւններ՝ օրէնքին անվիճելիութիւնը խախանու քնոյթը չեն կրնար ունենալ :

—Ո՞քան կ'ապրի վարդը : Առառու մը միայն :

—Ինչքա՞ն կը տեէ ամենէն դիմացկուն կօշիկը : Եւ քամիս :

Եթէ ըսէք լինծի թէ տասը օր դիմացող վարդեր տեսած էք, ես կը պատասխանեմ թէ կեանքերնուդ մէջ երբեք Հիւկօ չէք կարդացած, իսկ երբ ապացուցանելու կը ջանաք թէ՝ կօշիկներ կան որ տարի մը կրնան ապրիլ, այն ատեն սա համոզումը կը գոյացնեմ թէ՝ դուք՝ մեղքընալիք զոհերն էք . . . Դամիանոս Փափազեանի ուք լամիներուն :

Սէրը՝ նոյն իսկ ասոր ամենէն բուռն, ամենէն անշահախնդիր, ամենէն անյագ տեսակը դիմանայ, դիմանայ տարի մը, երկուք և կամ շատ շատ երեք : Զորս տարի տեսող սէրին աերրատիոն կ'ըսեն Ֆրանսացիք, nonsense Անգլիացիները և Իզմիրցիները . . . — Իյե՛ւ է եավրում :

Երկու փակագիծի մէջ ըսեմ թէ մինակ «Համր սէր» երն որ սովորականէն քիչ մը տւելի կը քշէն : Ասոր ալ յանցանքը իմս չէ :

Կնկան մը գեղեցկութիւնը, ո՛ւր որ ալ երթաք, հազիւ հինգ տարի կը դիմանայ : Տեսողութեան միենոյն չափը ունին նաև . . . պարտքերը ինչպէս նաև առնելիքները, որոնց հինգ տարիէն ետքը՝ միայն իները կրնատ տեսնել :

Հայ գրական հանդէսներաւն կեանքը վեց թիւ է և Մնակեանի տատմները տամնըմէկ արարուած կը տեւն, ան ալ իւսկիւտարի մէջ :

Այս ամէնուն մէջ մինակ բան մը կայ որ ո՛չ չափ ունի, ո՛չ սահման, ո՛չ սկիզբ, ո՛չ վախճան և ո՛չ ալ գրաման . ատ ալ մեր լազգապեաներուն . . . բարձրգութիւնն է :

Շատ երկար, Մանզումի խմբագրականներուն պէտք երկար պիտի ըլլար եթէ մի առ մի չափելու և սահմաններու ելլէի ամէն բաներու տեսողութիւնը :

Ուրիշին գիտցածը նորէն կրկնել . . . ձեռքէն խլել պիտի ըլլար Քասիմի միակ առաքինութիւնը :

Բայց բան մը կայ որուն տեսողութեան չափը գիտնալ տրուած չէ ձեզի :

Հակառակը մի՛ պնդէք, պղտիկ կը մնաք :

Լսէք տեսնեմ. Որքա՞ն տեելու է . . . պաչիկը :

Զայն շի կայ: Զեր համբութիւնը չի զարմացներ զիս, որովհետեւ ձենէ շատերը նախ չեն գիտեր թէ ի՞նչ է պաշիկը, ինչպէս ֆէլլա, կիները չեն գիտեր թէ ի՞նչ է վարտիկը :

Տէրտէրին աջը կ'առնէք, կը համբուրէք հայրիկին ձեռքը և կը կարծէք թէ պաշիկը ըսուածը ատ է : Խեղճէր :

Ինչո՞ւ հեռուները կ'երթանք :

—«Համբոյր տուի միմիանց» կը կարդան մեր եկեղեցին մէջ և ժողովուրդը իրարու ականջին . . . «Քրիսու յարեաւ» կ'ըսէ :

Ահա ինչպէս կը հասկնանք պաշիկը և ինչպէս համբոյր կուտանք իրարու:

C'est bête . . .

Դիտաւորութիւն չունիմ համբոյրին ինչ ըլլալը բացատրել ձեզի : Սակայ կրնայ հեռուները տանիլ մեզի և որեւէ գինով չպիտի ուզէի որ երկար գրողի համբաւը վաստկիմ, գրեթէ ձրիապէս : Ես կը դաւանիմ որ յօդուած մը արժէք ունենալու համար պէտք է որ կարծ ըլլայ, ինչպէս որ համբերութիւնը բանի մը ծառայելու համար պէտք է որ երկայն ըլլայ:

Ես չեմ պահանջեր որ ամէնքդ ալ տարրալուծած ըլլաք պաչիկը և հասկնաք զայն այնպէս ինչպէս որ հասկցած էր

այն տարածալդեկ բանաստեղծը որ իր վերջին շունչը արձակած պահուն հետեւալ տողերը երգեց :

La salive de tes baisers sent la dragée,  
Avec je ne sais quoi d'une épice enragée.  
Et la double saveur se confond tellement  
Que j'y mange à la fois du sucre et du piment.

C'est dans le même instant l'eau courante et la  
braise  
C'est plus chaud qu'un alcool, et plus frais  
qu'une fraise.

Et ton souffle s'y mèle et me monte au cerveau  
Comme le vent du soir grisé de foin nouveau.

Դեռ այն նրբացած յմթունքները չունինք՝ հա հոյզի  
մը մէջէն զանազանելու համար ալքհոլը . . . ելակէն :

Համբոյի դպրոցին մանկապարտէզի աշակերտներն ենք  
տակաւին և հազիւ սորվեցուցած են մեզի թէ՝ ինչպէս որ  
գաղափարներու շփումէն լոյս կը ծագի, այնպէս ալ շըր-  
թունքներու շփումէն կը ծնին . . . արու և էդ միք-  
րոպները :

Կարճ կապելու, և ստիպուած չըլլալու համար յօդ-  
ուածս ողողել կէտադրութիւններով՝ որոնք ուրիշ բան  
չեն բայց եթէ տպագրութեան ամօթխածութիւնը, բուն  
ինդրոյն կ'անցնիմ և կ'ուզեմ սորվեցնել ձեզի, եթէ ոչ  
համբոյի ինչ ըլլալը, բայց գոնէ անոր տեսդութեան  
առհմանը :

Etiquetteի աշխարհին մէջ ամէն ինչ կը հպատակի  
կանխաւ որոշուած օրէնքի մը և կամ սովորութեան մը :

Երկու չէ, օրինակի համար, պարահանդէսի մը մէջ  
երկու քատրիլ պարել միւնոյն տամախն հետ և մինակ տեղ

մը քաշուիլ տասը վայրկեանէն աւելի : Այսօրուան փող-  
կապը վաղն ալ չեն դներ և միենոյն ձեռնոցը երեք ան-  
գամ իրարու վրայ հագնելը՝ պարզապէս քիթիբիոսու-  
թիւն է :

Շիք մարդը երբ ստիպուած է ճառ մը ըսել, տասը  
վայրկեանի մէջ ըսելիքը կ'ըսէ կը լմնցնէ : Մէկ ժամ շա-  
րունակ խօսովը . . . Ամսախայի առաջնորդ կ'ընեն :

Միայն պաչիկը կար որուն տեսդութեան վրայ նոյն  
խոկ Տիկին աը ժամնոէի կինցաղագխութեան գրքին մէջ  
տող մը չէ գրուած . հետեւաբար ամէն մարդ ուզած եղա-  
նակովը կը պազնէր և ուզածին չափ կ'երկարէր անոր  
տեսդութիւնը :

Savoir Vivreի այս թերութիւնը կուգայ սրբագրել  
. . . Պրուքինի ստիկանութիւնը :

Պարոն Ռուզվէթի երկրին մէջ — սպասելով որ Պարոն  
Թաֆթինը ըլլայ — կ'երեայ թէ գերջերս նորաստեղծ համ-  
բոյր մը մէջտեղ ելած էր որ պարզապէս գայթակղութիւն  
կը պատճառէր առաջինազարդ եանքիներու աշխարհին մէջ :

Այսուհետե soul kiss ըսուած պահիկը արգիլուած է  
Պրուքինի մէջ, ինչպէս արգիլուած է թրամվէներու մէջ  
թքնելը ի նիւ-Եօրք :

Հոգեշունչ համբոյը — ես այսպէս կը թտրգմանեմ  
soul kissը, ևթէ երբէք Պարոն Գրիգոր Մալիսաս կը ներէ  
— պագնուելու տեսակ մըն է որու մէջ կը թուի՝ գեղանի  
ամերիկուհիները, Gibbsion girlերու այդ մտատիպարները  
իրենց ամբողջ հոգին կը դնեն, ինչպէս մեր հայուհիները  
երենց ամբողջ . . . լորձունքը :

Տեսած էք երբէք և կամ կրնա՞ք երեսկայել համբոյը  
մը որ տես . . . մէկ վայրկեան և բառասունը եօրը երկ-  
վայրկեան :

Այդքան ժամանակտմիջոցի մը մէջ մնաք կրնանք Ղա-

շաթիայէն Պոլիս անցնիլ, մինչդեռ Ա. Խերիկացիները հազիւ կը պեճերուին կոր համբոյր մը տալու և կամ առնելու:

Մէջ մըն ալ կ'ըսեն թէ հակոտնեաներու աշխարհին մէջ ժամանակը սուղ է:

Եթէ գործին մէջ սուղ բան մը կայ ան ալ համբոյրը ըլլալու է, ապա թէ ոչ անոր մէկ հատին համար հարիւր եօթը երկվայրկեան չէին զոհեր:

Միս Մօտ Ատամու — Նոր Աշխարհի Սառա Պէրնարը — պատճառ եղաւ որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը քիթը խօժէ տատանկ intime խնդրոյ մը մէջ և անոր վրայ կանոնագրութիւն մը հրատարակէ իրեւ թէ Անուղղակի Տրոց վերաբերեալ գործ մը ըլլար պահիկը:

Դէշը հոն է որ եթէ այդ երկարաշունչ պաշխկները չորս պատի մէջ փոխանակուած ըլլային, ոստիկանութիւնը մատը չի պիտի փաթթէր հանրային բարոյականին դէմ հնթագրուած համբուրելու այդ եղանակը, ինչպէս կ'ընէ մենաշարժ մեքենաներու վազքին համար:

Բայց չէ, Վաշինգթոնի թոռնուհները և թոռնուհները — ինչպէս կը պատմէ New-York Herald — ամէն ամօթխածութիւն մէկ կողմ դնելով, այդ մօսափ պաշիկը կուտանեղեր իրարու՝ փողոցին մէջ, squareներու վրայ, առուսներու երկայնքը, Maison-Blancheի կամարներուն տակ, ոստիկանութեան աչքին առջև, տղաքներու դիմաց և Salvation Armyի պատկանող երկսեռ խոռմբերու քով և ասիկա՝ առատորէն, առանց քաշուելու, լիշտուրթն և en veux tu en voilà. Ստիկ գայթակղութիւն մը ձեզի որով կը զբաղի կոր այս պահուս ամերիկեան մամուլը, եւրոպականն ալ միասին:

Եթէ հետաքրքիր էք, թարգմանեմ ձեզի ոստիկանական հրահանգին զլխաւոր քանի մը մասերը, և ասիկայ առիթ մը պիտի ըլլայ ձեզի ցուցնելու թէ մարդ

ինչպէս կրնայ անգլիերէնէ թարգմանել . . . ֆրանսական բնագրին հետեւելով:

«Պրուքլինի ոստիկանութիւնը իր այս պաշտօնական շրջաբերականով կը պատուիրէ պաշտօնի վրայ գտնուող բոլոր զօրագլուխներուն, տեղակալներուն, յիսնապետներուն, տասնապետներուն, ինչպէս նաև պարզ ոստիկան-զինուորներուն որ այսուհետեւ պէտք է արդիլեն հանրային վայրերու մէջ այն համբոյրները որ երկու երկվայրկեանէն աւելի կը տեէ:

«Երբ պաշտօնի վրայ գտնուող ոստիկան մը կը տեսնէ թէ երկու տարբեր սեռի պատկանող անհատներ քիչ մը երկար բարակ պազնուելու վրայ են, պէտք է որ միջոց մը գտնէ այս կամ այն ձեռվ աղ ոտեւ մը հանելու, իր ներկայութիւնը զգացնել տալու համար համբոյրի տալմիշ եղող զոյդին: Եթէ հակառակ այսազդարարութեան այդ երկու անձերը իրենց շրթունքները չի զատեն իրարմէ, օրինական միջոցներ պէտք է ձեռք առնուին այդ բիսիկնեմկ պաչիկին վերջ մը տալու համար:

«Իսկ եթէ ասով ալ կարելի չըլլայ առաջքը առնել այդ գայթակղութեան, ոստիկանութիւնը պէտք է ձերբակալէ զիրենք և օճ սանթիմի կը նստի կոր, ինչ որ քիչ մը աղի գին մըն է այդքան անուշ բանի մը համար:

Հակառակ սակայն այս օրէնքին խստութեան, նորէն soul kissը ամենէն շատ վնասուած համբոյրի եղանակը կը մնայ կոր Ա. Մօտամուխանէն անդին:

Մինակ առաջին օրելուն պէս, Միս Մօտ Ասամոխ օրինակին հետեւողները ստէպ չեն ենթարկուիր կոր սօն-

traventionի ամոր համար որ Պրուֆլինի սստիկանները միշտ մը գտած են թէ՛ օրէնքը յարգելու և թէ՛ թող տալու ար ամէն մարդ ուզած կերպովը գործածէ իր շրթունքները :

Ահա՛ թէ ինչպէս :

Երբ սստիկան մը կը տեսնէ թէ երկու հոգի — տարբեր սեռէ, չի մոռնանք — իրարու քով գալով բերաննին կը բանան, ինքը անմիջապէս կը դոցէ աչքերը :

Այսպէսով թէ՛ օրէնքը տեղը գացած կ'ըլլայ և թէ պաշիկը :

## Ը Ա Գ - Մ Ո Գ



Բարիզ հասած օրս կառախումքէն վար կ'իջնեմ թէ ոչ — կը գրէ ինձի բարեկամ մը — խոշոր գիրերով ազդարարութիւն մը աչքիս կը զարնէ պատին վրայ փակցուած :

## FAMILY-HOUSE

Հիանալի դիրք, նեռաձայն,

Աշխարհիս բոլոր բերբերը եւ հանդէսները

Ֆրանսական խոհանոց

Բնտեալ երկսեռ յանախորդներ

## 16 Rue Cambon

Ամէնքը մէկանց գործիս կուգար և կառք մը վարձելով ուղղակի դիմեցի ցոյց տրուած հասցէին :

Տաճկական մազի ներկի նոր գիւտ մընէր որ հետո կը տանէի, Բարիզի մէջ lancer ընելու համար :

Պանդոկին տէրը դուտ ֆրանսական քաղաքավարութեամբ մը զիս կ'ընդունի :

— Երրորդ յարկը սենեակ մը ունի՞մ որ ձեզի շատ յարմար պիտի դայլ : Հանգստաւէտ սենեակ մընէ այդ, ուր հօգութիւն մասին բան մը պակաս չէ : Ժամը եօթնուկէսին

կուտանք իրիկուան ճաշը : Առատուն չօքոլա . թէյ կամ սուրձով կաթ : Դռնապանը ամէն առատու կը ներկէ քո-  
sionnaireներուն կօչիկները :

Օրը տասը գրանք պիտի վճարէի , ինչ որ գործիս կու-  
գար :

Առանց վարանումի բռնեցի սենեակը և սնտուկներու  
ու պայուսակներու վեր բերել տուի :

Աղէկ մը լուացուեցայ , զրաս փոխեցի և դռնապանը  
ուղեցի տեսնել :

Յաղթանդամ , խնդում երես մարդ մը ներկայացաւ ,  
քանի մը յանձնառութիւններ տուի և սենեակիս չորս կողմը  
աչք պատրաստելէ ետքը դուրս ելայ Լաֆայէթ փողոցը  
հաստատուած քանի մը հայրենակից բարեկամներ երթալ  
տեսնելու :

Երկու երեք օր ետքը նշմարեցի թէ դռնապանը փոխուած  
էր : Յաղթանդամ մարդուն տեղ , տկարակազմ , նիհար ,  
կարմիր մազերով մարդուն մէկը կը ներկէր կօչիկներու :

Շաբաթ մը ետքը ասոր ալ յաջորդեց երկայն մօրու-  
քով , ակնոցաւոր երիտասարդ մը որ Սամաթիացին մը պէս  
կը խօսէր գրանսերէնը :

Գիտէի թէ մրանսայի մէջ ամէն օր նախարար կը փո-  
խեն , դռնապաններուն համա՞ր ալ ասանկ է արդեօք :

Այս մասին գեռ վճիռ մը չի տուած , նայիս երկար  
մօրուքով դռնապանը կը փոխուի և տեղը կուգայ պեխերը  
ածիլուած մէկը որ ամէն մեղքիս վրայ երկու ուսերուն  
միշե կուզ մը ունէր :

Անընական կը գտնէի սակայն այս պարբերական փո-  
փոխութիւնը :

Այս մասին անօրէնէն բացատրութիւն մը պահածնելու  
վրայ էի երբ աւելի կարեոր բանի մը համար պէտք եղաւ  
հետը տեսնուիլ :

Վրաս ունեցած ամբողջ ստակս հաստած էր , տուի մը  
ներկ չէի կրցած ծախել և Պոլիսէն սպասած ստակս կ'ու-  
շանար :

Հետեաբար պիտի խնդրէի անօրէնէն որ քանի մը օր  
պայմանաժամ տար ինծի շաբաթական հաշխու մաքրելու :

Մարդը առաջարկութիւնս ընդունեց , պայմանաւ որ  
երրորդ յարկի սենեակս ձգէի , չորրորդին վրայ բնակելու  
համար :

Շաբաթ մը ետքը հինգերրորդը ելայ , որովհետեւ Պո-  
լիսէն սպասած ստակս միշտ կ'ուշանար գալու :

Ութ օր ետքն ալ խնդրեց որ եօթերրորդ յարկի պըզ-  
տիկ մէկ սենեակով գոհանամ , սպասելով որ ստակս գար :

Առատու մը քովս եկաւ և հետեւեալ խօսքերը ըստ  
ինծի .

— Այսպէս չենք կրնար շարունակել , սիրելի պարոն ,  
եօթերրորդ յարկը վերջինն է : Հետեաբար վաղուցնէ  
սկսեալ դռնապանին սենեակը պիտի պառկիք և յանձն  
պիտի առնէք բոլոր այն պարտականութիւնները որ դռնա-  
պանին պաշտօնը կը կազմին , այսինքն ամէն տուտու քո-  
sionnaireներուն կօչիկները պիտի մաքրէք :

Զէի կրնար ընդդիմանալ և մարդուն առաջարկը ըն-  
դունեցի :

Հիմայ կը բացատրեմ ես ինծի մարդուն հանձարեղ  
սիսթէմը : Զի վճարող յաճախորդները կը բարձրացնէր մին-  
չե վերի յարկը , օրին մէկն ալ դռնապանին սենեակը ի-  
շեցնելու ծամար :

Փորձանքը փորձանք էր և գլուխ ծոելէ զատ ուրիշ  
ձամբայ չի կար :

Յաջորդ առառու ունեցածս չունեցածս ժողվեցի և  
իջայ վար :

Մինչև ստակին գալը դռնապանութիւն պիտի ընէի +  
որո՞ւ հոգ . Բարիղի մէջ ո՞վ կը ճանչնար զիս :

Հարկաւ երկուշաբթի բօսթան սպասածս պիտի բերէր :  
Ներկին գործը յաջողցնելու համար, ամէն բան աչքս  
առած էի :

Իրաւ, այս տարիքիս մէջ դռնապանութիւն ընել դըժ-  
ուարիս կուգար, բայց դժբաղդութիւնները մարդոց հա-  
մար չեն միթէ :

Այս մասձումները ընելու վրայ էի երբ ժամացոյցը  
կէս գիշեր կը զարնէ . պառկելու ժամն է, կամաց կամաց  
կը հանուիմ, և անկողին չի մտած կօշիկներս, ըստ սովո-  
րութեան, դռնէն դուրս կը դնեմ :

Առաջուն կ'արթննամ և դուռը կը բանամ կօշիկներս  
առնելու :

Ի՞նչ աւանակ եմ եղեր, պառկած սենեակիս դուռը  
փողոցին վրայ է եղեր և ես ուշադրութիւն չեմ ըրեր :

Բնականաբար անցնողին մէկը թոցուցած էր նորի նոր  
պօթիններս :

Դժբաղդութիւն . — բայց չուտ մը մխիթարուեցայ-  
Մէկ զոյտ կօշիկ պակաս կար ներկելու :

\* \* \*

Դեռ անկողնիս մէջն եմ, տաքուկ տաքուկ կերազեմ  
կոր, երբ ոպասուհին դուռս կը բանայ — այդ արտօնու-  
թիւնը տուած եմ իրեն — ըսելու համար ինծի թէ ֆէսով  
մէկը եկած է վարը և անպատճառ զիս տեսնել կուզէ :

Առաջու առաջու ո՞վ կրնար ըլլալ : Ներս մտնողը ան-  
ձանոթ մըն է որ ամէն բանէ առաջ ներողութիւն կը խնդ-  
րէ զիս անհանգիստ ըրած ըլլալուն համար :

Աթոռ մը ցոյց կուտամ իրեն և կը խնդրեմ որ նստի :  
— Այսօր օդը շատ գէշ է, ըստ այցելուս :

Եթէ այս բանը ըսելու համար եկած էր, գործ ունինք :  
Երբուընէ ի գեր է որ օդին աղէկ կամ գէշ ըլլալը  
ծանուցանելու համար մարդերը կերթան կը գտնեն իրենց  
անկողնին մէջ :

Ես չեմ տեսներ կոր, պատուհան չունիմ միթէ :  
Ամէն ոէր ակնարկով մը կը սկսի և ամէն խօսակցու-  
թիւն օդին գէշ կամ աղէկ ըլլալովէ :

Յառաջարանը դրուած էր, կրնայի հիմա հարցնել թէ  
ինչ բանի կը պարտէի իր վաղազարթոյց այցելութիւնը :

— Աղաջանք մը ընելու եկած եմ :  
— Հրամմեցէ :

— Հողալանտայի թագուհին նամակ մը պիտի գրէք  
ինծի համար :

— Վիժումներու գէմ դեղ մը գտած էք հրամանքնիդ :  
— Զէ էֆէնտիս, ես բժիշկ չեմ :

— Հապա՞ :

— Սիկուրքայի գործ մը ունիմ, ինծի անիբաւութիւն  
կ'ընեն կոր, կ'ուզեմ որ խնդիրս հասկցնես իրեն : Հողան-  
տայի ընկերութիւն մը անիբաւութիւն կ'ընէ կոր, այրած  
առանս ստակը չուզեր կոր վճարել : Ամէն օր դեսպանա-  
տուն երթալ գալէն հոգիս ելաւ . ավունով ալ ստակա  
գնաց : Հիմայ եկած եմ խնդրելու որ անցած գարձածը  
թագուհին իմացնես :

— Բայց ես ատանկ բաներ գրել չեմ գիտեր . փաստա-  
բանի մը գնա :

— Ինծի աղէկութիւն մը պիտի ընես , էֆէնտիս , ի՞նչ  
կ'ըլլայ , ոտքդ պազնեմ :

— Քաւ լիցի : Բայց ըսի որ ես ատանկ բաներ գրել  
չեմ գիտեր :

— Առ ձեր ազնուութիւնն է . ինծի ըսին որ Պոլսոյ մէջ  
եթէ մէկը կայ որ այդ նամակը կընայ գրել , ան ալ հրա-  
մանքդ ես :

— Հետդ կատակ ըրեր են . ես փաստաբան չեմ , աղաս :

— Գիտեմ որ ալօգար չէք . բայց ամէն մարդ կ'ըսէ  
կոր որ ձեզի պէս կնկան բան գրող չի կայ :

Ըսել է ունեցած համբաւս , ասանկ անկարեաներու-  
պիտի ծառայէ եղեր :

Ո՞ր օրը արդիօք երդում պիտի հանեմ , մէյ մըն ալ  
գրիչ ձեռք չառնելու :

Վրան բաց բան գրելը պատճառ մըն է արդիօք վիլ-  
հէլմինա թագուհին հետ թղթակցելու :

Հայեր կան որ կարծես երէկ իշեր են Արարատէն :

\* \* \*

Անհաղուրժելիօրէն տգեղ կին մը իր ամսւսնոյն :

— Աչքդ բա՛ց ինծի նայէ , ես խօսքը շիտկէ շիտակ կը  
դրուցեմ , իմ քովս երկու երես չի կայ :

— Գոնէ Աստուած այդքանը ողորմեր է ինծի :

\* \* \*

Մեր առնտիկինները .

Պարտիզակէն նոր եկած պղտիկ սպասուչի մը , առ-  
տու մը խենդի պէս աիրունւոյն վրայ կը վաղէ և աչքերը  
կոպիճներէն դուրս ելած աղիողորմ կերպով կը հեծծէ .

— Հանըմ , մեռնիմ պղտոր , երկու հատ քովիու կ'ըլեցի :

— Հոգ մ'ըներ , աղջիկս , հարիւր հատը քսան փարայի  
կուտան կօր :

\* \* \*

Շատ անդամ կինները չափազանց ուրախութիւն ու-  
նենալնուն համար չէ որ կը խնդան , այլ գեղեցիկ ակու-  
ներ ունենալնուն :

\* \* \*

— Ունեցածնիս , չունեցածնիս պիտի հատցնես , առւնը  
աեղը պիտի կործանես , մոխիրի վրայ պիտի նոտինք , կը-  
մէր կին մը իր խաղամոլ էրկանը ,

— Ինչո՞ւ ատանկ կըսես , կընիկ , օր մը շատ կը կոր-  
մցնեմ , օր մը քիչ , ատրեգլխուն իրար կը բռնէ :

\* \* \*

Ֆրանսայէն օօօր կելլայ , Եգիպտոսէն բամպակ , Զի-  
նաստանէն թէյ , Մոռսաստանէն խալեար , Իզմիրէն թուզ  
և գիւրամատոյց կիններէն . . . հայ :

Աղօրին ալիւր կը հայթայթէ անօթութիւնը՝ գողերը և  
Աքեայի աքսորը . . . աղջային երեսփոխաններ :

C'est charmant.

\* \* \*

Ի՞նչ բանէ շինելու է կօշիկի մը ներքանները որ շատ  
դիմանան :

—Կնկան լեզուէ :

—Ինչո՞ւ

—Որովհետեւ չի մաշիր :

\* \* \*

Սէրը կոյր ըլլալուն համար չէ՞ որ շատ մը էրիկներ  
չեն տեսներ նոյն խոկ գլուխնուն վրայ բուսած ձղիկները :



104.

Spz

UnP

5453



Digitized by  
srujanika@gmail.com

2013

